


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու բլր մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Երանոսյան տողը
20 ամսիկով



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ձ Ք Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Յ Ի

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրողները եւս
չեն տրոհիր

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԸ

— 3 —

Ընդհանուր Միութեան խնդրի առիթով գրած մեր վերջին յօդուածը, եթէ յիշում են ընթերցողները, փակեցինք այն հարցումով թէ ի՞նչ գործնական միջոց կարելի էր առաջարկել՝ լուծելու համար այդ կարեւոր խնդիրը, որ, անցնող րոպէներում, մեր կարծիքով, միայն կենսական հարցն է, որ լրջօրէն դրուած է հայ Յեղափոխական կուսակցութիւնների առաջ մասնաւորապէս, հայ ժողովրդի առաջ ընդհանրապէս, և որի յաջող կամ անյաջող լուծումից անընդմիջապէս կախում ենք կարծում մենք Ընդհանուր Ազգութեան մտաւրում, գուցէ և հեռւորը, ապագան, նրա գուցէ վերջնական բաղդը, վերջնական ճակատագիրը:

Մեր ներկայ յօդուածի նիւթը, հետեւաբար, լինելու է այս անգամ ոչ առաւելապէս ինքը, Միութեան խնդիրը, իւր կարեւորութեան և անհրաժեշտութեան տեսակէտով, — այդ մասին աւելի քան խօսեցանք և գեռ կշարունակենք միշտ խօսել, — այլ այն միջոցը, որը մենք մեր կողմից կգտնենք որպէս ամենագործնականը, ամենախելացիին և, հետեւաբար, ամենանպատակաշարժարը՝ լուծելու համար նրան, և, իբրեւ այդպիսի, կառաջարկենք, կգտնենք նրան ինչպէս հայ ժողովրդի, նոյնպէս և, առաւելապէս, Հայ Յեղափոխական կուսակցութիւնների առաջ, որպէսզի օչ առաջ գործադրուէր, օչ առաջ իրագործուէր այն:

Բայց նախ քան այդ մասին խօսելը, մենք աւելորդ չենք համարի, նոյն իսկ հարկաւոր կը կարծենք մի անգամ էլ համառօտակի կրկնել, ամփոփել այն ինչ ասացինք, որպէս վերջին եզրակացութիւն, Միութեան խնդրի մասին, մեր նախորդ յօդուածներով: Առաւել ևս, որ մեր առաջարկելիք միջոցը պէտք է յայտնել որպէս տրամաբանական

հետեւութիւն մեր կողմից վերլուծութեան ենթարկուած հայկական-յեղափոխական իրերի վերլուծեան:

Մենք ասացինք և քանիցս չեշտեցինք որ Ընդհանուր Յեղափոխական Միութիւնը, այսինքն գոյութիւն ունեցող Յեղ. կուսակցութիւնների վերացնելը և նրանց մի և ընդհանուր միակ մարմնի վերածելը, մի ստիպողական, հարկեցուցիչ և անյետաձգելի անհրաժեշտութիւն է, որի իրագործելը հանդիսանում է որպէս առաջնորդի ոչ պայման նախ բարձրացնելու համար հայ հասարակութեան և, եթէ ուզում էք, ընդհանուր քաղաքական աշխարհի առաջ ընդհանուր Հայ Յեղափոխական վարկն ու հեղինակութիւնը, մի խօսքով՝ նրա խառնակեանը:

Այս կամ այն կուսակցութեան բարոյականի բարձրացման մասին մտածելը առանձնապէս, որքան էլ յարգելի լինի շարժառիթը, աննպատակ է, անիմաց է և ոչ մի օգուտ չի բերի ընդհանուր գործին՝ եթէ կամ քանի, իրերի բնական և տրամաբանական բերումով, կուսակցութիւնները ճակատագրականապէս ենթարկուած են կրելու, փոխադարձ անդրադարձման օրէնքով, մէկի կամ միւսի կողմից գործ դրուած որ և է անմիջ ընթացքի, յիմար գործունէութեան եղանակի, անդարմանելի սխալի հետեւանքով առաջացած չարիքի հակահարուածը: Երկրորդ՝ իւր-տացնելու, ամբողջացնելու, կեդրոնացնելու համար բոլոր գործող և գործելու կազմ ու պատրաստ յեղափոխական ոյժերը, — մարդ, գէնք, ազգամթերք, պաշար — մէկ ձեռքի տակ, մէկ գրօշակի տակ և դնելու համար նրանց գործունէութեան մէկ եղանակի, մէկ ուղղութեան, մէկ տակտիկայի մէջ:

Որ այսպիսի Միութիւն յեղափոխական ոյժերի միջև աւելի քան անհրաժեշտ է, աւելի քան այժմէական է, աւելի քան ստիպողական է — այդ ոչ ոք կարող

է ժխտել, այդ ոչ ոք կարող է բացասել: Մնում է ուրեմն որ նա կատարուի, որ նա իրագործուի, որ նա իրողութիւն դառնայ որքան կարելի է շուտ:

Մենք ասացինք, բացի դրանից, և հակառակ այդ մասին տիրող, թէ՛ յեղափոխական շարքերի մէջ և թէ՛ նրանցից դուրս, անստուգութեան, անորոշութեան, վարանման և նախապաշարման կարգն անցած մտաւոր անգործութեան, որ այդպիսի մի միութիւն յեղափոխական բոլոր շարքերի միջև անկարելիութիւն չէ, այլ, ընդհակառակը, բոլորովին կարելի, և հիմնուեցանք այն անհրաժեշտ փաստի վերայ որ տիրող կուսակցական բաժանումները չունենին ամենալին իրենց որպէս հիմք ոչ լեզուային, հետեւաբար ցեղային, ոչ տոհմային, ոչ նոյն իսկ կրօնական և աշխարհագրական անվերածելի տարբերութիւններ, եթէ նոյն իսկ կարող էր այս կատեգորիաներից իւրաքանչիւրը ամեն անգամ անվերածելի նկատուիլ և արդարացնել քաղաքական բաժանում, ինչ որ խնդիր է:

Մեր ներքին կուսակցական բաժանումները, ասացինք, յենուած են միայն և միմիայն ծրարագրային տարբերութիւնների վերայ, որոնք, վերջին հաշուով, ուրիշ բան չեն ներկայացնում, բայց եթէ միեւնոյն նպատակի իրագործման ձգտող խմբերի միջև նոյն այդ նպատակի եւ նրան իրականացնելու համար ձեռք բռնելու գործընկերական եղանակի վերաբերմամբ կազմուած հասկացողութիւնների տարբերութիւններ, եւ մենք շարունակեցինք եզրակացնելով որ Ընդհանուր Միութիւնը չլինելով հանգեւած անկարելի, ինչ որ կարող էին կարծել կամ կարծել տալ շատեր, ներկայացնում է սակայն լուրջ գծաւորութիւններ, ինչպէս առհասարակ ամեն մի գծաւոր գործ, ոչ աւելի, ոչ պակաս, որ, սակայն, երբ անհրաժեշտ է դառնում, զգացում, հասարակական բարիքի համար հարկել,

գիւրացնել և, վերջապէս, լուծել, փնտռում են, առաջարկում են միջոցներ և, քիչ ուշ, քիչ կանուխ, այդ լուրջ, նոյն իսկ անյաղթելի կարծեւած դժուարութիւնները յաղթում են, տիրապետում են, հարկում են, լուծում են՝ տեղի տալով այն իրերի դրութեան, որ անհրաժեշտ է դարձած և կոչուած է ծառայելու հասարակական ընդհանուր նպատակի իրականացման:

Որ յեղափոխական կուսակցութիւնների միջև Ընդհանուր Միութիւնը անկարելի չէ և ինչ որ կարելի է այդ մասին առարկել, բացի նրա իրագործման այս կամ այն առաւել կամ նուազ յօռտարտքամք շուտօրէն հանգամանքները չեշտելուց, առաջ նետելուց՝ ուրիշ բան չկայ և չէ կարելի ներկայացնել, — այդ նոյնպէս ոչ ոք կարող է հերքել, ոչ ոք կարող է ժխտել բացասել:

Բայց եթէ Միութիւնը յեղափոխական բոլոր անշատ կուսակցութիւնների միջև, առանց բացառութեան, ամենի կողմից նկատուում է, տեսնուում է, ընդունուում է անհրաժեշտ, օգտակար, կենսական — և մենք դիմում ենք արդէն մեզ զբաղեցրնող բո՛ւն խնդրին —, եթէ միւս կողմից, ընդունուում է նմանապէս որ նրան իրականացնելու համար չկայ ոչ մի անկարելիութիւն, բացի գծաւորութիւններից, որոնք գալիս են միայն և միմիայն հասկացողութեան տարբերութիւններից, քաղա, հարցընում ենք, ի՞նչն է և ի՞նչը կարող է խանգարել մեզ, Յեղափոխականների, Յեղափոխական կուսակցութիւններին, ի մի վայր գալ, խմբուիլ, հաւաքուիլ, ինչպէս ստում են, կանաչ սեղանի շուրջը և փնտռել գտնել, ստեղծել միջոցներ, վիճել, վիճաբանել, դնել, առաջարկել դրութիւններ, ոչնչացնել տարբերութեան կէտերը ուրոյն ծրագիրների մէջ, պահելով նրանցում այն կէտերը միայն, որոնք կարող են ներկայանալ ընդհա-

